ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Հաստատություն՝ 53 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Լուսինե Բաղալյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...…3
ԳԼՈՒԽ 1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ
1.1. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկաններ) ……4
1.2. Գեղագիտական դաստիարակության դերը կերպարվեստային գործունեության մեջ…5
1.3. Կերպարվեստային գործունեություն…… 7
ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս
2.1. Կերպարվեստային պարապմունքների նախապատրաստում……10
Եզրակացություն……14
Գրականության ցանկ……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատության սանի լիարժեք զարգացման, նրա անձնավորության ձևավորման գործընթացների արդյունավետությունը պայմանավորված է ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ և գրագետ կազմակերպելուց: Ինչի համար պարտադիր է ծանոթ լինել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին: Գեղագիտական դաստիարակության հիմնական մանկավարժական պայմանը արվեստի ստեղծագործություններով հարուստ գեղագիտական միջավայրի, կենցաղի գեղագիտության ապահովումն է: Հզոր է արվեստի ներգործությունը գեղագիտական դաստիարակության ընթացքում: Կերպարվեստի պարապմունքները սաների ամենասիրելին են և որպեսզի ապաովեն նրանց զարգացումը, զուգակցելով հաճելին և օգտակարը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել կերպարվեստի պարապմունքներին ներկայացվող պահանջները:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմամբ՝ կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջների ուսումնասիրման, բացահայտման և կիրառման միջոցով, որն իրականացվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով:

Թեմայի նպատակն է՝ ուսումնասիրել և բացահայտել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջների համապատասխանությունը:

Թեմայի կիրառական նշանակությունը

Թեմայի ուսումնասիրության ընթացքում մեկնաբանվել և վերլուծվել են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջները, կերպարվեստային գործունեության նպատակը, խնդիրները, վերջնարդյունքները, նախադպրոցական հաստատությունում կիրառելու տարբերակները, որոնք կարող են մեծապես նպաստել.

- նախադպրոցական հաստատության մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը,

- Կերպարվեստի պարապմունքների ճիշտ և գրագետ պլանավորման ու անցկացմանը:

ԳԼՈՒԽ 1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ

1.1. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկաններ)

Կրտսեր առաջին խմբի 2-3 տարեկանների կրթական հիմնական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ [4]:

Կրտսեր 1-ին խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 5 ծրագրային բաղադրիչներում՝

1.խոսքի զարգացում,

2.ինձ շրջապատող աշխարհը,

3. ֆիզկուլտուրա,

4. երաժշտություն,

5. կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում: Ծրագրային բոլոր բաղադրիչներն ուղղված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը, որոնք էլ միտված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը նախադպրոցական տարիքի ավարտին:

Նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողունակություններն են՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,

3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

5. թվային և մեդիա կարողունակություն,

6. մշակութային կարողունակություն,

7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,
8. տնտեսական կարողունակություն,
9. ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Ծրագրային բովանդակությունը ապահովում է 2-3 տարեկան սաների տարրական պատկերացումների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորումը՝ յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ: Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (2-3 տարեկանների) ուսումնաստիարակչական գործընթացի բովանդակության կառուցվածքը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղությունները ներառող շաբաթական պարապմունքների քանակը, կանոնակարգային պահերը, շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, տարեվերջին սաներից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների:

2-3 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին,
- կրթության աշխարհիկ բնույթը,
- երեխաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, էկոլոգիական նախագիտելիքներին ծանոթացման ներառումը [2]:

1.2. Գեղագիտական դաստիարակության դերը կերպարվեստային գործունեության մեջ

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ, որի գեղեցկությունը կարող է նկատել և հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան:

Այն ենթադրում է սանի ընկալման, երևակայության, հետաքրքրությունների, զգացմունքների, ունակությունների և հակումների զարգացում, հիշողության ձևավորում: Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորությունները և ապրումները խոր հետք են թողնում սանի կյանքում, և դրանք հետագայում երբեք չեն մոռացվում: Մանկության շրջանում հուզական ներդաշնակությամբ զուգորդված զգացողությունները վստահություն են ներշնչում աշխարհի հանդեպ և պահպանվում են ամբողջ կյանքում [5, էջ 92]:

Գեղագիտական դաստիարակությունը բացահայտում է նախադպրոցականի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր որակներ: Այն պետք է ուղղված լինի սանի ստեղծագործելու ցանկության արթնացմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Գեղեցիկ միջավայրը սանի գեղագիտական դաստիարակաթյան հիմնական պայմանն է և միջոցը: Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:

Սանի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է: Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է այն ընկալելու, գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկության և պահանջմունքի արթնացմանը [1, էջ 154]: Սաների մտածողությունը դառնում է ավելի ճկուն, նպատակային, երբ նրանք միջավայրը հարմարեցնում են իրենց գործունեության պահանջներին, միջավայրով պայմանավորված՝ հետաքրքիր, գործնական խնդիրները սաներին դարձնում են ավելի կարող, հմուտ, հնարամիտ, գործունյա և անկախ: Այն բավարարում է սանի հետաքրքրությունները, ապահովում նրա անվտանգ և առողջ կենսագործունեությունը:

Սաների ուշադրությունը հարկավոր է հրավիրել այն բանի վրա, որ իրենք խաղում և պարապում են մաքուր, լուսավոր, գեղեցիկ կահավորված խմբասենյակում: Ճբոսանքի ժամանակ երեխաները պետք է սովորեն տեսնել շրջակա միջավայրի գեղեցկությունը, դիտեն և զննեն մանկապարտեզի տարածքը, տեսնեն ներդաշնակությունը՝ ծաղկանոցի, այգու, խաղահրապարակի միջև:

1.3. Կերպարվեստային գործունեություն

«Կերպարվեստ և կառուցողական աշխատանք» ծրագրային բաղադրիչը նպատակաուղղված է կրտսեր 1-ին խմբում ձևավորելու սաների առաջին զգայական ընալումները գեղեցիկի նկատմամբ, զարգացնելու լսելու, տեսնելու և դիտելու ունակությունները, հետաքրքրություն առաջացնելու կերպարվեստի տեսակների՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիայի և կառուցողական աշխատանքի նկատմամբ: Ծրագրային այս բաղադրիչի խնդիրներն են՝

- Խթանել հետաքրքրությունը կերպարվեստային՝ տեսակների նկատմամբ:
- Ծանոթացնել նկարչական նյութերին, ձևավորել մատիտի, վրձնի, ջրաներկի հետ աշխատելու հմտություններ:
- Ծանոթացնել ծեփակերտման նյութերին:
- Ծանոթացնել ապլիկացիայի և կառուցողական աշխատանքի հիմնական նյութերին:
- Ծանոթացնել երեք հիմնական գույներին:
- Ձևավորել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ:
- Նկարելիս բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ /հեռու- մոտ, բարձր-ցածր/: Զարգացնել զգայական ընկալումը: Սովորեցնել զգալ, դիտել, տեսնել շրջապատող միջավայրը:
- Ձևավորել երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունք:
- Զարգացնել պատկերացումներ առարկաներին բնորոշ հատկությունների՝ ձևի, չափի, գույնի նկատմամբ [3]:

Երկուսից երեք տարեկան երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ: Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բերկրանք: Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան ունենում է դրական զգացողություններ, ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն:

Կրտսեր առաջին խմբում կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում՝ սանը ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոխանցելու հմտություն: Ձևավորվում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները, զարգանում են լսելու,

տեսնելու, դիտելու, վերլուծելու ունակությունները: Ձևավորվում են պատկերացումներ այն մասին, որ մատիտով, վրձնով, յուղամատիտով նկարում են, իսկ ծեփանյութով՝ ծեփում:

Այս տարիքային խմբում սաների ուշադրությունը պետք է հրավիրել թղթի վրա մատիտով, վրձնով ստացվող գծերի, ուրվագծերի, գույների, պատկերների վրա: Անհրաժեշտ է սաներին առաջարկել պատմել այն մասին, թե ի՞նչ են իրենք նկարել, և ինչի՞ է այն նման: Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ սանը ճանաչում է դրանք, և նրա մեջ ձևավորվում են առաջին պատկերացումները արվեստի ոլորտում: Անհրաժեշտ է, որ սանը կարողանա տեսնել իրականի և նկարածի միջև նմանություններ և տարբերություններ: Սկզբում նա պետք է աշխատի տաք գույներով: Դա օգնում է նրան ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, պայծառ գույներով առարկաների նկատմամբ:

Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան աստիճանաբար սովորում է գույների, գծերի լեզվով «պատմել» իր տեսածի զգացածի մասին, ինչպես նաև զարմանք արտահայտել շրջապատի երևույթների վերաբերյալ: Կերպարվեստային գործունեությունը լավ տրամադրության սկզբնաղբյուր է, ուստի անհրաժեշտ է խթանել և զարգացնել հետաքրքրասիրությունը ստեղծագործական աշխատանքի նկատմամբ: Երեխան թղթի վրա արտահայտում է ոչ միայն այն, ինչ տեսնում է շրջապատում, այլև դրրսևորում է սեփական երևակայությունը, խթանելով ստեղծագործական կարողությունների զարգացումը [2, էջ 9]:

Կրտսեր առաջին խմբում անհրաժեշտ է զարգացնել սաների հետաքրքրասիրությունը և ուշադրությունը կերպարվեստային նյութերի նկատմամբ: Տարեսկզբին երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել իր կողմից արված «խզբզանքի», տարբեր գծերի և ուրվագծերի վրա: Անհրաժեշտ է սաներին հնարավորություն տալ՝ տարբեր ուղղություններով բլրի վրա հետագծեր առաջացնել: Սկզբնական շրջանում այդ գործողությունները կարող են արտահայտվել անհամաձայնեցված շարժումների միջոցով, սակայն աստիճանաբար երեխայի ձեռքն այդ ամենը կկատարի ավելի վստահ և կոկիկ: Նկարչական գործունեության ընթացքում սաները պետք է սովորեն համեմատել առարկաներն ըստ մեկ հատկանիշի, գտնեն 2 առարկաների կամ երևույթների նմանությունը:

Այս տարիքային խմբի կերպարվեստային ծրագրի առաջնային նպատակներից է՝ տեխնիկայի ուսուցումը. մատիտը բռնել 3 մատով, կատարել տարբեր վարժություններ՝ կետեր, գծեր, շրջանիկներ, աղեղներ, մեծ և փոքր գունավոր օղակներ: Հարկավոր է սովորեցնել ճանաչել և տարբերել թղթի վրա քաշած հետագծերը, դրանք ճիշտ անվանել, խթանել գունավոր մատիտներով թղթի վրա նկարելու ցանկությունը: Նկարչական

տեխնիկայի խնդիրներից է՝ վրձնին ծանոթացումը, սաները սովորում են վրձինը ճիշտ բռնել և կատարել վարժություններ՝ վրձնահարվածներ, վրձնահպումներ, մեկ գույնի օգտագործմամբ պատկերել պարզ առարկաներ, ճանաչել և տարբերել հիմնական գույները, որոշ բաղադրիչ գույներ, կատարել վարժություններ երկու հակադիր գույների զուգակցմամբ: Անհրաժեշտ է աշխատելու ընթացքում բացատրել ճիշտ նստելու, իրանի դիրքը ճիշտ պահելու, վրձնից և ներկանյութերից օգտվելու ձևերը: Հետևողական աշխատանքի կազմակերպման արդյունքում ձևավորվում են գունաներկերով ճիշտ և կոկիկ աշխատելու, աշխատատեղը կոկիկ պահելու կարողություններ: Զարգանում է երեխայի շրջակա աշխարհի գեղագիտական ընկալումը: Կրտսեր առաջին խմբում կերպարվեստային պարապմունքների ընթացքում ծրագրային նյութին տրամադրվում է ավելի քիչ տեղ, իսկ նյութի ամրապնդմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը՝ ավելի շատ:

Այս տարիքային խմբում երեխայի շարժումները սահմանափակ են: Այդ առումով՝ խնդիր է առաջանում հետևել երեխայի ճիշտ նստելու և բնականոն կեցվածքի պահպանման գործընթացին: Պարապմունքներն ըստ տեսակի այս տարիքային խմբում շաբաթվա ընթացքում բաշխվում են հետևյալ կարգով.

- նկարչություն - 1 անգամ,
- ծեփ – 0,5 անգամ,
- կառուցողական աշխատանք - 0,5 անգամ:

Այսինքն՝ ծեփը և կառուցողական աշխատանքն անցկացվում են հետևյալ հերթագայմամբ մի շաբաթ՝ ծեփ, մի շաբաթ՝ կառուցողական: Արդյունքում ամսվա կտրվածքով կազմակերպվում են 4 նկարչության, 2 ծեփի, 2 կառոցողական պարապմունքներ՝ 10-15 րոպե տևողությամբ: Ծեփի և կառուցողական աշխատանքի պարապմունքները կարելի է կազմակերպել նաև այլ կերպ՝ կախված թեմայից: Եթե այն շարունակական է, կարելի է երկու շաբաթ անցկացնել ծեփ, իսկ ամսվա մյուս երկու շաբաթները՝ կառուցողական աշխատանք:

Ապլիկացիայի պարապմունքներ այս տարիքային խմբում չեն կազմակերպվում, սակայն դրա տարրերն օգտագործվում են խավատախտակի վրա աշխատանքի ժամանակ: Այս աշխատանքը հիմք է հանդիսանում հաջորդ տարիքային խմբում ապլիկացիայի պարապմունքի նախապատրաստման համար [2, էջ 11]:

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս

2.1. Կերպարվեստային պարապմունքների նախապատրաստում

Փորձարարական աշխատանքներն իրականացվել են Երևանի թիվ 53 մանկապարտեզի կրտսեր առաջին խմբում: Ուսումնասիրությանը մասնակցել են 2-3 տարեկան երեխաներ:

Փորձարարական աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել կրտսեր առաջին խմբում կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները և համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ:

Պարապմունքին՝ նախապատրաստվելը սկսվում է պլանավորումից: Ընտրելով ծրագրային նյութը և որոշելով թեմա մանկավարժական աշխատողը ուսուցման մեթոդների և հնարների ճիշտ ընտրությամբ, կապահովի նյութի առավելագույն ընկալումը: Պլանավորման ընթացքում որոշվում է, թե ինչ նախապատրաստական աշխատանք է հարկավոր կազմակերպել՝ դիտում, զրույց, պատմվածքի ընթերցում, ծանոթացում նոր խաղալիքին և այլն: Մեկ օր առաջ դաստիարակը նախապատրաստում է պարապմունքի համար անհրաժեշտ նյութերը՝ նկարչական թղթի հակառակ կողմում գրվում է սանի անունը, ամսաթիվը, անուններով թղթիկներ է նախապատրաստում նաև ծեփի համար: Անհրաժեշտության դեպքում երանգավորվում է թուղթը: Կտրվում են թեմային համապատասխան երկրաչափական պատկերներ, սրվում են կոտրված մատիտները, պատրաստվում է աղի խմոր և այլն: Որոշ նյութեր պատրաստվում են հենց նույն օրը ջրով բացվում է ջրաներկը կամ գուաշը և այլն: Ծեփակերտման և կառուցողական աշխատանքների անվանաթղթերը դաստիարակը բաժանում է պարապմունքի վերջում:

Երեխաների պատկերացումներն այս կամ այն առարկայի վերաբերյալ ճշտելու նպատակով կազմակերպվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիդակտիկ խաղեր, որոնց ընթացքում ծանոթանում են առարկաների ձևերին, չափերին, գույներին և այլ հատկանիշներին:

Պարապմունքից առաջ անհրաժեշտ է օդափոխել խմբասենյակը, այս պարագայում երեխաները շուտ չեն հոգնի: Նմուշօրինակները դրվում են անհրաժեշտության դեպքում երկու-երեք տարբերակով, որպեսզի տեսանելի լինեն բոլորի համար:

Կրտսեր առաջին խմբում կերպարվեստային նյութերը սեղաններին է դնում դաստիարակը: Սակայն երբեմն որոշ նյութեր սաներին է հանձնարարվում դնել սեղանին՝ մատիտները, վրձինները կամ այլ նյութեր: Նման օգնությունը հետաքրքրություն է առաջացնում կերպարվեստային պարապմունքների նկատմամբ և խթանում

աշխատանքային դաստիարակությունը: Պարապմունքի ավարտին դաստիարակը երեխաներին սովորեցնում է հավաքել և իրենց տեղերը դնել կերպարվեստային պարագաները, լվացվել անհրաժեշտության դեպքում: Աստիճանաբար ձևավորվում են ինքնասպասարկման կարողություններ:

Այսպիսով, կերպարվեստային գործունեության յուրաքանչյուր տեսակ ունի իր առջև դրված նպատակ, խնդիրներ և վերջնարդյունք, որոնք բխում են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներից: Ներկայացնենք կերպարվեստային գործունեության տեսակների վերջնարդյունքները:

Նկարչություն.

Տարեվերջին կրտսեր առաջին խմբի երեխան պետք է.

- ճանաչի նկարչական նյութերը և կիրառի դրանք,
- ճիշտ բռնի և օգտագործի մատիտ, յուղամատիտ, վրձին,
- նկարի՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը,
- նկարի օղակներ, գծեր,
- իմանա հիմնական գույները,
- պահպանի ճիշտ կեցվածք նկարելու ընթացքում,
- խնամքով օգտագործի նկարչական նյութերը:

Ծեփակերտում.

- ճանաչի ծեփվող նյութերը,
- ծեփակերտի ծավալային մի քանի մարմին՝ գունդ, ձեռքի շրջանաձև շարժումներով, գլան՝ ձեռքի ափերի հետ-առաջ շարժումներով,
- ափերով տափակեցնի ծեփանյութը,
- ծավալային որոշ մարմիններից տափակեցման միջոցով ստանա երկրաչափական պատկեր՝ գնդից ստանա շրջան,
- միացնելով գլանի եզրերը՝ ստանա օղակ,
- ծեփակերտի պարզ առարկաներ,
- ծեփանյութից առանձնացնի մանր մասեր:

Կառուցողական աշխատանք /ապլիկացիա/.

- տարբերի և անվանի կառուցողական հիմնական նյութերը,
- ըստ նմուշի կառուցի պարզ շինություն մեծահասակի օգնությամբ,
- կիրառի իր կառուցած շինությունները խաղի մեջ,
- կառուցի պարզ շինություններ՝ ուղղահայաց և հորիզոնական դիրքերով,
- ճիշտ օգտվի սոսնձից,
- նախապես կտրատված պատկերները փակցնի թղթի վրա,
- տարբերի և ճիշտ ընտրի գույները: [4]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, գիտամեթոդական գրականության ուսումնասիրության և հետազոտության փորձարարական աշխատանքի վերլուծության հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

Սանի զարգացման հարցում անփոխարինելի դեր են կատարում կերպարվեստային գործունեության տարբեր ձևերը՝ նկարչությունը, ծեփակերտումը, դեկորատիվ կիրառական ավեստը, կոնստրուկտավորման աշխատանքները:

Ստեղծագործական բնույթի պարապմունքները երեխաներին զինում են գիտելիքներով, պատճառում են ուրախություն, արվեստի նկատմամբ վերաբերմունք: Կերպարվեստային գործունեությունը պետք է ղեկավարվի հմուտ մասնագետների կողմից: Դաստիարակը պետք է կարողանա կողմնորոշվել արվեստի, կերպարվեստի տարբեր բնագավառներում, տիրապետի նկարչական տարբեր ձևերի կարողություններին և նկարչական տարբեր միջոցներին, տեխնիկական հնարքներին, մանկան ստեղծագործական մանկավարժահոգեբանական գործընթացի առանձնահատկություններին: Մանկավարժական աշխատողը պետք է գաղափար կազմի Ïեñå³ñíեëïÇ ¹³ë³í³Ý¹Ù³Ý ÙեÃá¹ÇÏ³ÛÇ, ինչպես նաև ըÝ¹Ñ³Ýáõñ մեթոդների Ù³ëÇÝ:

Կերպարվեստային գործունությունը կարող է զարգանալ միայն նպատակաուղղված ղեկավարման պայմաններում: Նման ղեկավարումը հնարավոր է այն դեպքում, երբ դաստիարակը հստակ պատկերացնում է իր գործունեության ոլորտը, տեղյակ է ծրագրի բովանդակությանը և մեթոդներին, տիրապետում է նկարչական ունակություններին:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչն ուսումնասիրելու արդյունքում եկանք այն եզրահանգման, որ կերպարվեստի խնդիրներն են՝ սանի կերպարվեստային կրթությունը ուղղել նրա ստեղծագործական, պատկերային արվեստի զարգացման, շրջակա միջավայրի իրականության տպավորությունների արտահայտման, արվեստի և գրականության վրա: Նպաստել երեխայի 4 կերպարվեստային կարողությունների, հմտությունների զարգացմանը: Կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի խնդիրն է ստեղծել և կանոնակարգել ուսուցման մեթոդների դիդակտիկ հիմքերը, ³é³ñÏ³ÛÇ ¹Ç¹³ÏïÇÏ ¹ñáõÛÃÝեñÁ: Առարկայի ուսուցման կարևորագույն պայմաններից է ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուրին: Ծրագրային նյութը պարբերաբար պետք է համալրվի ժամանակակից մեթոդներով, գիտության և տեխնիկայի բնագավառում ստեղծված նվաճումներով, գրականությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Է.Ա. Ալեքսանդրյան, Լ.Մ. Այվազյան, Հ.Վ. Խաչատրյան – Նախադպրոցական մանկավարժություն: Դասագիրք: Եր., Մանկավարժ. 1992. – 270 էջ
2. Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Լ. Սարգսյան – Կերպարվեստի պարապմունքները մանկապարտեզի կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերում. Ուսումնամեթոդական ձեռնարկ: - Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2015. - 224 էջ

3. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկաններ)
4. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ
5. Ս.Ա.Մարության, Ա.Մ.Դալլաքյան – Նախադպրոցական մանկավարժություն: Բուհական դասագիրք: Եր., "Գասպրինտ", 2008